



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 26.12.2013թ. ԹԻՎ 33/6-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՏԱՏՎԱԾ «ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐԻ, ՄՈՒՏՔԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԿԱՐԳԻ 16-ՐԴ ԿԵՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱԴԵՍ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի և Կարեն Մեժլումյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 16-րդ կետի երկրորդ պարբերության գործողությունը ժամանակավորապես կասեցնելու հարցը,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 16.03.2020թ. թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային համավարակի (COVID-19) կանխարգելման նպատակով Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրությունը և դրանով պայմանավորված որոշակի գործունեություն իրականացնելու և այլ սահմանափակումները (անհնարինությունը),

նկատի ունենելով այն հանգամանքը, որ Կարգի 16-րդ կետի երկրորդ պարբերությունը սահմանում է, որ *Փաստաբանի նկատմամբ բոլոր դեպքերում կարգապահական վարույթ է հարուցվում, եթե փաստաբանի անդամավճարի պարտքը գերազանցել է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը,*

հաշվի առնելով այն, որ Պալատը Կարգի վերոնշյալ կետի հիման վրա պարտավոր է կարգապահական վարույթ հարուցել բոլոր այն փաստաբանների նկատմամբ, որոնք 60.000 ՀՀ դրամ և ավելի գումարի չափով չեն կատարել անդամավճարի վճարման պարտավորությունը,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտակարգ դրությամբ պայմանավորված տնտեսական և սոցիալական խնդիրների հետ կապված որոշ փաստաբաններ օբյեկտիվորեն կարող են ունենալ անդամավճարի վճարման դժվարություններ,

21 ապրիլի 2020թ.

թիվ 8/7-Լ

հաշվի առնելով Պալատի պատրաստակամությունն այս շրջանում ընդառաջել փաստաբաններին և անդամավճարը չվճարելու հիմքով փաստաբանների նկատմամբ չհարուցել կարգապահական վարույթներ,

Պալատի խորհուրդը ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 11-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 16.03.2020թ. թիվ 298-Ն որոշման պահանջներով, միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց '

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ. թիվ 33/6-L որոշմամբ հաստատված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 16-րդ կետի երկրորդ պարբերության գործողությունը ժամանակավորապես՝ 6 (վեց) ամիս ժամկետով կասեցնել (չկիրառել):

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

21 ապրիլի 2020թ.
թիվ 8/7-L
ք. Երևան